ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 49 - 50 (16648) ՇԱԲԱԹ, 23 ՀՈՒՆԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵՑ ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵԻՆ

Հունիսի 20-ին, Վրաստանի խորհրդարանի խորհրդարանական կոմիտեների համատեղ նիստերում եւ ապա օրենսդիր մարմնի արտահերթ լիագումար նիստում, պատգամավորները ձեռնամուխ եղան կառավարող «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կողմից առաջադրված վարչապետի թեկնածու Մամուկա Բախտաձեի կողմից ձեւավորված կառավարության նոր կազմի եւ վարչապետ թեկնածուի կողմից ներկայացված գործադիր իշխանության գործունեության ծրագրի քննարկմանը:

Երեկոյան Վրաստանի խորհրդարանը՝ 99 կողմ եւ 6 դեմ ձայներով, հավանություն տվեց կառավարող «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կողմից առաջադրված վարչապետի թեկնածու Մամուկա Բախտաձեի կողմից ներկայացված կառավարության նոր կազմին:

*Գործադիր նոր իշխանությունը գլխավորում է վարչապետ **Մամուկա Բախտաձեն**: Մամուկա Բախտաձեի կառավարության կազմում են էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար՝ **Գիորգի Չերքեզիշվիլին**, արտաքին գործերի նախարար՝ **Դավիթ Զալկալիանին**, ներքին գործերի նախարար՝ **Գիորգի Գախարիան**, ֆինանսների նախարար՝ **Նիկոլոզ Գագուան**, կրթության եւ գիտության նախարար՝ **Միխեիլ Չխենկելին**, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար՝ **Դավիթ Սերգեենկոն**, բռնազավթված տարածաշրջաններից բռնի տեղահանված անձանց, վերաբնակեցման եւ փախստականների նախարար՝ **Սոզար Սուբարին**, միջավայրի պաշտպանության եւ գյուղատնտեսության նախարար՝ **Լեւան Դավիթաշվիլին**, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար՝ **Մայա Ցքիտիշվիլին**, մշակույթի եւ սպորտի նախարար՝ **Միխեիլ Գիորգաձեն**, պաշտպանության նախարար՝ **Լեւան Իզորիան**, արդարադատության նախարար՝ **Թեա Ծուլուկիանին**, պատժակատարողական եւ պրոբացիայի նախարար՝ **Կախա Կախիշվիլին**, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար՝ **Քեթեւան Ցիխելաշվիլին**:*

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՄԵՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Կառավարության կազմի հաստատումից հետո, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն պատգամավորների առջեւ ելույթ ունեցավ գործադիր իշխանության գործունեության ծրագրով:

ԿՐՃԱՏՎՈՒՄ Է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Իր խոսքում վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ որպես առաջնային նախաձեռնություն առաջարկում է նախարարությունների թիվը 14-ից նվազեցնել եւ հասցնել 11-ի:

- Առաջին նախաձեռնություններից մեկը, որը ես կներկայացնեմ խորհրդարանին, կլինի փոքր կառավարության հայեցակարգը, որը նախարարությունների թվի կրճատում է նախատեսում մինչեւ 11: Երեք շաբաթից ես կկարողանամ խորհրդարանին ներկայացնել նորացված կաբինետը, որը ինձ հետ միասին իրականացնելու է կառավարության ներկայացրած ծրագիրը,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն: Խուսափելով կրճատվող նախարարությունների կոնկրետացման հարցից՝ վար-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԷՍՏՈՆԻԱՅՈՒՄ

Հունիսի 21-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին տիկնոջ՝ Մակա Չիչուայի հետ, մեկնեց Տալլին՝ մասնակցելու Էստոնիայի Հանրապետության 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին:

Տալլինում եւ Տարտուում անցկացվելիք միջոցառումներին, Վրաստանի նախագահից բացի, մասնակցեցին Լիտվայի, Լատվիայի, Լեհաստանի եւ Ֆինլանդիայի առաջին դեմքերը:

Այցի շրջանակներում, Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Էստոնիայի նախագահ Քերստի Կալյուլանդի հետ: Հանդիպմանը երկու երկրների նախագահները քննարկեցին երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր: Վրաստանի նախագահի եւ Էստոնիայի վարչապետ Յուլի Ռատասի հանդիպմանը, երկկողմ տնտեսական հարաբերություններին առնչվող հարցերի հետ միասին, կողմերը առանձնակի ուշադրություն հատկացրին ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովի նախապատրաստման եւ տարածաշրջանային անվտանգության թեմաներին:

Այսօր՝ հունիսի 23-ին, Տալլինում Գիորգի Մարգվելաշվիլին տիկնոջ հետ ներկա գտնվեց Էստոնիայի անկախության մեկդարյա հոբելյանին նվիրված զորահանդեսին:

ՍՖՏՀ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՍԾՏՀ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում ավարտվեց Սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) Խորհրդարանական վեհաժողովի 51-րդ նստաշրջանի աշխատանքը:

Պատգամավորների որոշմամբ, Ալբանիայից ՍԾՏՀ-ի նախագահությունը փոխանցվել է Հայաստանի Հանրապետությանը: Խորհրդանշական մուրճը հանձնվել է Հայաստանի պատվիրակության ղեկավար, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովին:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՇԻՈ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԸ՝ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱՆՈՐԴ



Հունիսի 21-ին Վրաստանի Պատրիարքարանում անցկացվեց վրաց Ուղղափառ առաքելական եկեղեցու սուրբ սինոդի հերթական նիստը: Այն վարեց Համայն Վրաստանի Կաթողիկոս -Պատրիարք Իլիա Երկրորդը:

Սուրբ սինոդի օրակարգում ներառված էին ուկրաինական եկեղեցու ինքնության, Վրաստանի օրենսդրությունում առանձին տեսակի թմրանյութերի ազատականացման, ինչպես նաեւ Կաթողիկոս-Պատրիարքի կողմից Շիո Միտրոպոլիտին պատրիարքության փոխանորդ նշանակության հարցի օրինականության հետ կապված թեմաները:

Սուրբ սինոդը հավանությամբ ընդունեց Իլիա Երկրորդի որոշումը Շիո Միտրոպոլիտի Պատրիարքի փոխանորդ նշանակելու մասին:

Սուրբ սինոդն ընդունեց նաեւ հատուկ հայտարարություն երկրի խորհրդարանի կողմից առանձին թմրանյութերի օրինականացման վերաբերյալ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԾԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 19-ին, Վրաստանի կառավարության գրասենյակում, Կրոնի հարցերով պետական գործակալության նախաձեռնությամբ, կազմակերպվեց վարժանք-սեմինար «Հոգեւոր դեմքերի գիտելիքների բարձրացում կրոնի ազատության եւ մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների տեսանկյունից» խորագրով:

Վարժանք-սեմինարն անցկացվում է 2018-2020 թթ. Մարդու իրավունքների գործնական ծրագրի շրջանակներում, երեք փուլով, եւ դրան մասնակցում են Վրաստանում գործող բոլոր կրոնական կազմակերպությունները:

Ի թիվս մյուս կրոնական կազմակերպությունների առաջնորդների, սեմինար-վարժանքին ներկա էր Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Վարժանք-սեմինարին ներկա էր գործակալության նախագահ Զազա Վաշախմաձեն: Այն վարում էին գործակալության իրավաբանական ապահովման աշխատակիցներ Վալերիան Լիլուաշվիլին եւ Դավիթ Դավիթաշվիլին:

Վարժանքի հիմնական թեման կրոնի ազատության տեսանկյունից գործող ազգային օրենսդրության եւ այս ուղղությամբ միջազգային իրավունքի պրակտիկան էր: Սեմինարն ընթացավ հարցուպատասխանի ռեժիմում, որտեղ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները խոսեցին իրենց առջեւ ծառացած մարտահրավերների մասին, միաձայն նշվեց միջկրոնական ձեւաչափի եւ Կրոնի գործակալության ընդգրկվածության անհրաժեշտությունը գոյություն ունեցող հարցերի կարգավորման գործում:

Վարժանք-սեմինարին ապագայում փուլ առ փուլ կընդգրկվեն Վրաստանի բոլոր տարածաշրջանները:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վրաստանի կառավարությունում խորհրդակցություններ են տարվում կառուցվածքային փոփոխությունների շուրջ: Վարչապետ Մամուկա Բախտաձեն կառավարությունում նախատեսված վերակազմակերպման առնչությամբ բյուրոյի ձեւաչափում անցկացրել էր խորհրդակցություններ խորհրդարանի անդամների հետ: Հանդիպումը կայացել է «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կենտրոնական գրասենյակում:

Ինչպես հայտարարել է հանդիպման ավարտից հետո խորհրդարանի առողջապահության կոմիտեի նախագահ Ակակի Զոիձեն, քանի նախարարություն կմնա Վրաստանի կառավարությունում, այս մասին դեռեւս որոշում կայացված չէ: Նրա մեկնաբանմամբ, քննարկվում է վարչապետ Մամուկա Բախտաձեի առաջարկը՝ նախարարությունների քանակը 14-ից 11-ի հասցնելու մասին, սակայն գաղափարը դեռեւս քննարկման ընթացքում է:

- Հավաստիացնում եմ՝ վերջնական որոշում կայացված չէ: Առաջարկ կա այս ուղղությամբ, սակայն առաջարկը դեռեւս չի նշանակում կայացված որոշում,- մեկնաբանել է Ակակի Զոիձեն:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՎՐԱՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՄ Է

Հունիսի 21-ին Վրաց Ուղղափառ եկեղեցու Սուրբ սինոդը հանդես եկավ հայտարարությամբ կանեփի ազատականացման հարցով խորհրդարանի ընդունած որոշման կապակցությամբ:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ եկեղեցին երբեք չի աջակցել թմրամոլությամբ տառապող հիվանդների նկատմամբ կալանավորմանը, սակայն համարում են, որ Սահմանադրական դատարանի կողմից թմրանյութի ազատականացման կապակցությամբ արդեն կայացված որոշումը մեծ վտանգ է պարունակում եւ լուրջ խթան հանդիսանում թմրանյութերի լայն տարածման ու կիրառման համար:

Սուրբ սինոդի անդամները համարում են, որ «կանեփի պատրաստման թույլտվությունը փաստորեն թմրանյութ վաճառողների օրինականացումն է, որը երկրի համար կունենա ծայրահեղ ծանր հետեւանք»:

Սինոդի նիստի արձանագրությունում ասվում է, որ նիստին առաջ է քաշվել հարց թմրանյութի ազդեցության տակ մահացած անձանց եկեղեցական ձեւով հուղարկավորելու մասին:

«Ժողովը քննարկել եւ որոշել է.

Ստեղծել հանձնաժողով՝ նշված եւ այլ ծանրացուցիչ հանգամանքների պատճառով ծագած հարցերը եկեղեցական ընդհանուր դիրքորոշմամբ մշակելու համար»,- ասվում է Սուրբ սինոդի նիստի արձանագրությունում:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Ռուս-վրացական օգոստոսյան պատերազմի 10-ամյակի եւ Ռուսաստանի կողմից Վրաստանի տարածքների բռնազավթման տարելիցի կապակցությամբ, Եվրախորհրդարանը քվեների ճնշող մեծամասնությամբ ընդունել է բանաձեւ հօգուտ Վրաստանի:

«Վրաստանի բռնազավթված տարածքները Ռուսաստանի ներխուժումից տասը տարի անց» վերնագրով բանաձեւը ներառում է քսան կետ: Առանձին կետերով հիշատակվում են Օթխազորիա-Տատունաշվիլի-Բաշարաուլի սպանությունները եւ պատժամիջոցների հաստատման հարցը:

Փաստաթղթում նշված է, որ Ռուսաստանը պետք է կատարի միջազգային բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ 2008 թվականի հրադադարի պայմանագիրը:

Եվրախորհրդարանում, ի պաշպանություն Վրաստանի բանաձեւի, քվեարկությանը ներկա էին Եվրամիությունում Վրաստանի դեսպան Նատալյա Սաբանաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դմիտրի Ցքիտիշվիլին: Նրանց խոսքերով, վերոնշյալ բանաձեւը եւս մեկ անգամ մատնանշում է, որ Ռուսաստանը օկուպանտ է, եւ Վրաստանի տարածքները բռնազավթված են:

ԱՐՉԻԼ ՏԱՏՈՒՆԱՇՎԻԼՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑԻՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ

Մցխեթայի շրջանային դատարանը բավարարեց դատախազության պահանջը եւ Արչիլ Տատունաշվիլու խմբային կտտանքներին օգնելու մեղադրանքով բռնազավթված Ցխինվալիի երկրամասի այսպես կոչված իրավապահ մարմնի աշխատակիցներ Դավիթ Գուրծիեւի եւ Ալիկ Տաբոեւի համար՝ որպես կանխիչ միջոց, սահմանեց արգելափակում:

Դատախազի հավաստմամբ, գործում առկա են համապատասխան ապացույցներ, որոնք հստակորեն ցույց են տալիս, որ Տատունաշվիլուն կտտանքների են ենթարկել Գուրծիեւն ու Տաբոեւը: Հետաքննությունը քննությունը շարունակում է հանցագործության կատարման գործում մյուս մեղավորներին բացահայտելու համար:

Վրաստանի դատախազությունը ապօրինի արգելափակման եւ Տատունաշվիլու խմբային կտտանքներին օգնելու մեղադրանքը բռնազավթված Ցխինվալիի երկրամասի այսպես կոչված իրավապահ մարմնի աշխատակիցներ Դավիթ Գուրծիեւին եւ Ալիկ Տաբոեւին ներկայացրեց հեռակա կարգով:

ՏԱՏՈՒՆԱՇՎԻԼՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ՝ ԺՆԵՎԻ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱ

Վրաստանի արտաքին գործերի նախարարության տվյալներով, Ժնեւի միջազգային բանակցությունների 44-րդ փուլում հատկապես խստորեն են դրվել Արչիլ Տատունաշվիլու գործով արդարադատության իրականացման եւ 2008 թ. օգոստոսի 12-ից Ռուսաստանի Դաշնության կողմից հրադադարի համաձայնության կատարման անհրաժեշտության մասին հարցերը:

Նախարարության հայտարարության համաձայն, Վրաստանի ներկայացուցիչները Ժնեւի միջազգային բանակցությունների համանախագահներին եւ մասնակիցներին հանձնեցին Լեւան Սամխարուլու անվան փորձաքննության Ազգային բյուրոյի միջանկյալ զեկույցը, որը հստակ ներկայացնում է Արչիլ Տատունաշվիլու խոշտանգումների եւ սպանության փաստերը:

Ըստ Վրաստանի ԱԳՆ, ԱՄՆ եւ Վրաստանի համանախագահներն ու մասնակիցներն ընդգծել են մեղավորներին պատժելու անհրաժեշտությունը:

Ինչպես նշվեց արտաքին քաղաքականության վարչությունում, Ռուսաստանի ներկայացուցիչները եւ օկուպացիոն ռեժիմը չեն կարող պատճառաբանված պատասխան տալ ներկայացված հարցերին:

ՍԱԴՐԱՆՔԻ ՓՈՐՁ՝ ՊԱՆԿԻՍԻԻ ԿԻՐՃՈՒՄ

Օրերս Պանկիսիի կիրճում տեղի քիստ-չեչեն բնակիչները՝ Կադիրովի լուսանկարներով ու Ռուսաստանի դրոշներով, երթ անցկացրին, ինչը հանգեցրեց նույնպես տեղացի քիստ-չեչենների զայրույթին եւ ընդհարումների:

Մեկնաբանելով տեղի ունեցածը՝ Պանկիսիում չեչենական համայնքի ներկայացուցիչ Մեքա Խանգոշվիլին հայտարարել է, որ երթին հիմնականում մասնակցել են տեղացի եւ Ռուսաստանում աշխատող չեչենները, եւ տեղի ունեցածը գնահատում է՝ որպես սադրանք, եւ չի բացառում, որ այն կազմակերպված լիներ Ռուսաստանի հատուկ ծառայությունների կողմից: Նրա հայտարարությամբ, հայտնի փաստ է, որ պանկիսցի քիստերը չեն հանդուրժում Կադիրովին ու Պուտինին, քանի որ նրանցից շատերը մասնակցել են չեչենական պատերազմին: Նա չի բացառում նաեւ նման միջադեպերի ավելացման հավանականությունը:

- Սույն փաստը առավել մեծ ուշադրություն եւ զգուշություն է պահանջում: Ճիշտ է, այս միջադեպը կարելի է սպառված համարել, սակայն ցույց է տալիս առանձին ուժերի գործունեության արդյունքները: Երթի մասնակիցները տեղացիներ էին, ովքեր աշխատում են Գրոզնիում: Թեպետ նրանք էլ քաջատեղյակ են, որ Պանկիսիում Կադիրովին ոչ ոք չի հանդուրժում,- հայտարարեց Մեքա Խանգոշվիլին:



ԱՄՆ

ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՑ

ԱՄՆ-ը դուրս է գալիս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդից: Այդ մասին հայտարարել է ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Նիկի Հեյլին՝ պետքարտուղար Մայք Փոմպեոյի հետ հրավիրած համատեղ հատուկ մամուլի ասուլիսում:

- Մենք այս քայլին ենք դիմում, որովհետեւ մեր հանձնառությունը (մարդու իրավունքների պաշտպանությանը. խմբ.) մեզ թույլ չի տալիս այն երեսապաշտ կազմակերպության մասը կազմել, որը մարդու իրավունքները վերածում է ծաղրանքի,- ընդգծեց նա:

Իր հերթին, Փոմպեոն հայտարարեց, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը «խախտումների մեջ անհիմն մեղադրում է երկրների, որոնք դրանք չեն կատարել, եւ ըստ որում լռության է մատնում մյուս երկրների խախտումները»:

ԱՄՆ-ի որոշումը քննադատել են նաեւ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ ղեկավար Բորիս Ջոնսոնը, ինչպես նաեւ Եվրոպայի դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին: Իսրայելի կառավարությունը, ընդհակառակը, հայտարարել է, որ շնորհակալ է ԱՄՆ-ին Խորհրդից դուրս գալու «համարձակ որոշման» համար՝ այդ կազմակերպությունը համարելով «կանխակալ, թշնամական, հակաիսրայելական»:

ՄԱԿԵԴՈՆԻԱ ՆՈՐ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱԿԵԴՈՆԻԱ»

Մակեդոնիայի խորհրդարանը վավերացրեց երկրի անվանումը փոխելու վերաբերյալ Հունաստանի հետ ձեռք բերված համաձայնությունը: Օրենսդրական նախաձեռնությանը աջակցել է 120 պատգամավորից 69-ը: Հիմնական ընդդիմադիր VMRO DPMNE կուսակցությունը բոյկոտել է խորհրդարանի նիստը:

Վավերացումից հետո, համաձայնագիրը ստորագրելու համար ուղարկվել է երկրի նախագահ Գեորգե Իվանովին, որը այն ստորագրելու համար ունի 7-օրյա ժամկետ:

Նշենք, որ անցած շաբաթ նախագահ Գեորգե Իվանովը հայտարարել էր, որ փաստաթուղթը չի ստորագրելու:

Հունաստանը եւ Մակեդոնիան հունիսի 17-ին ստորագրել են նախկին Հարավսլավիայի Հանրապետության՝ Մակեդոնիայի անվանափոխման համաձայնագիրը, որի համաձայն, երկրի նոր անվանումը լինելու է Հյուսիսային Մակեդոնիա: Այսպիսով, Աթենքի եւ Սկոպյեի միջեւ ավարտվել է 27-ամյա վեճը, որը խոչընդոտում էր երկրի՝ ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանը ինտեգրվելու գործընթացին:

ԹՈՒՐՔԻԱ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 24-ին Թուրքիայում նախատեսված են արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրություններ:

Նախագահական ընտրությունների թեկնածուներն են՝ գործող նախագահ, իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանը, «Լավ» կուսակցության առաջնորդ Մերալ Աքշեները, Քեմալական հանրապետական ժողովրդական կուսակցության թեկնածու Մուհարեմ Ինջեն, քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության անդամ Սելահաթթին Դեմիրթաշը, «Վաքան» («Հայրենիք») կուսակցության ղեկավար Դողու Փերինչեքը եւ «Սաադեթ» («Երջանկություն») կուսակցության ղեկավար Թեմել Քարա Մոլլաօղլուն:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

«ԱՄՆ-Ի ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐՎԱԾ ԱԿՏ»- ՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՇՆԱԿԻՑ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ

«ԱՄՆ-ի ազգային պաշտպանության հեղինակավորված ակտ»-ի սենատի տարբերակում, Վրաստանը քննարկվում է որպես ԱՄՆ-ի դաշնակից եւ գործընկեր:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, 2018 թվականի հունիսի 18-ին, ԱՄՆ սենատը հաստատել է 2019 ֆիսկալ տարվա ԱՄՆ պաշտպանության հեղինակավորված ակտի (NDAA) օրինագծի սեփական տարբերակը, որը սահմանում է 2019 ֆիսկալ տարվա ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի քաղաքականության եւ բյուջետային առաջնահերթությունները:

«Հատկանշական է, որ ակտի համաձայն, Վրաստանը Եվրոպայի անվտանգության ենթատեքստում, Սեւ ծովի եւ Բալթյան երկրների հետ միասին, հիշատակված է որպես ԱՄՆ դաշնակից եւ գործընկեր:

Օրինագծի թիվ 1235 ենթագլուխը, որը վերաբերում է Եվրոպայում Ռուսաստանի ագրեսիան դադարեցնելուն (SENSE OF SENATE ON ENHANCING DETERRENCE AGAINST RUSSIAN AGGRESSION IN EUROPE), նշում է, որ Եվրոպայում ԱՄՆ դաշնակիցների եւ գործընկերների պաշտպանունակության ուժեղացումը ծառայում է ԱՄՆ ազգային հետաքրքրությունների պաշտպանությանը եւ իրենից ներկայացնում է Ռուսաստանի ագրեսիան դադարեցնող կոմպլեքսային ռազմավարություն: Նշված ենթագլուխը ներառում է նաեւ Վրաստանի հետ կապված կարեւոր ազդանշաններ:

ԱՄՆ սենատը մեկ անգամ եւս ընդգծում է ՆԱՏՕ-ի «բաց դռների» քաղաքականության, այդ թվում՝ Վրաստանի ՆԱՏՕ-ին ինտեգրվելուն աջակցությունը: Փաստաթուղթը կոչ է անում նաեւ ԱՄՆ վարչակազմին, աջակցել դաշինքի անդամ երկրների կողմից ՆԱՏՕ-Վրաստան առկա փաթեթի համար ռեսուրսների համակենտրոնացմանը եւ ՆԱՏՕ-Վրաստան վարժանքների ու գնահատման համատեղ կենտրոնի լրիվ օգտագործմանը:

Օրենքը ընդունելու համար հաստատված գործողությունների համաձայն, հաջորդ փուլը լինելու է ներկայացուցիչների պալատի եւ սենատի տարբերակների համապատասխանեցումը, որը տեղի է ունենալու մոտ ամիսներին, որից հետո միասնական տեքստը քվեարկության է դրվելու սենատում եւ ներկայացուցիչների պալատում, որից հետո այն ստորագրելու համար ուղարկելու են ԱՄՆ-ի նախագահին»,-նշված է արտաքին գործերի նախարարության հաղորդագրությունում:

Բացի այդ, Վրաստանի արտաքին գործերի նախարարության լրատվությամբ, ԱՄՆ-ը աջակցում է Վրաստանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը, դատապարտում է Ռուսաստանի կողմից Վրաստանի տարածքների բռնազավթումը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՎԻԶԱ

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ՝ ՄՈՆՏԵՆԵԳՐՈՅԻ ՀԵՏ

Ավելանում է այն երկրների թիվը, ուր Վրաստանի քաղաքացիները կարող են մեկնել առանց այցեգրերի (վիզա) ճեւակերպման:

Վրաստանի եւ Մոնտենեգրոյի միջեւ ճեւավորված համաձայնագրով, ընթացիկ տարվա հունիսի 15-ից Վրաստանի քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել տարվա 180-օրյա ժամանակահատվածի 90 օրը գտնվել Մոնտենեգրոյի տարածքում:

Այդ երկիրը սովետական ժամանակներից հայտնի է Չեռնոգորիա անունով եւ գտնվում է Միջերկրական ծովի ափին: Երկիրը ժամանակին հանդիսանում էր Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության կազմում ներառված յոթ հանրապետություններից մեկը: Այն անկախություն ստացավ 2010 թվականին, դաշնային հանրապետության փլուզումից հետո: Ներկայումս Մոնտենեգրոն Եվրամիության անդամ երկիր է:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ТВС БАНК

ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱՁԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ADB-Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ

TBC բանկի դիտորդական խորհրդի նախագահ Մամուկա Խազարաձեն հանդիպում ունեցավ Ասիայի զարգացման բանկի (ADB) նախագահ Տակեհիկո Նակաոյի հետ: Հանդիպմանը ներկա էին ADB-ի պատվիրակության անդամները, TBC բանկի ներկայացուցիչներ:

Կլոր սեղանի ձեւաչափով անցկացված հանդիպմանը, կողմերը քննարկեցին փոքր եւ միջին բանկային հատվածում TBC բանկի ու Ասիայի զարգացման բանկի միջեւ փոխհամագործակցության հարցերը: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ բիզնեսի աջակցությանն ուղղված համատեղ իրականացվելիք նախագծերը:

Նշենք, որ Ասիայի զարգացման բանկը TBC-ի հետ համագործակցում է 2011 թվականից: Այդ ժամանակահատվածում բանկերի կողմից իրականացվել է 150 միլիոն դոլար արժողությամբ համատեղ ծրագրեր: Համագործակցությունը շարունակվում է:

Հանդիպման թեմաներից մեկը Անակլիայի նավահանգստի շինարարությունն էր: ADB ներկայացուցիչները նավահանգստի շինարարության գործընթացի մասին Մամուկա Խազարաձեից մանրամասն տեղեկատվություն ստացան: Ներկա դրությամբ, Անակլիայի նավահանգստի շինարարության հարցով բանակցություններ են տարվում:

Հիշեցնենք, որ Ասիայի զարգացման բանկը հիմնադրվել է 1966 թվականին, եւ դրա գլխավոր խնդիրը Ասիայի եւ Օկեանիայի երկրներում աղքատության մակարդակի նվազեցումն է տնտեսական աճի ու տարածաշրջանային ինտեգրման ուղիով: 2017 թվականի տվյալներով, ADB-ի կողմից տարբեր երկրներում իրականացվել է 32,2 միլիարդ դոլարի ներդրում:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 6,5 ՏՈԿՈՍ Է

Ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների արդյունքներով, Վրաստանի տնտեսական աճը կազմել է ՀՆԱ-ի 5,5 տոկոսը: Միայն ապրիլին գրանցվել է 6,5 տոկոս աճի ցուցանիշ:

Վիճակագրական տվյալներով, միայն զբոսաշրջության ոլորտից ընթացիկ տարվա ապրիլին եկամուտն աճել է 27,5 տոկոսով եւ կազմել 238,9 միլիոն դոլար: Առանձին չորս ամիսների արդյունքներով, Վրաստանում արտաքին ապրանքաշրջանառությունն ավելացել է 22,1 տոկոսով եւ կազմել 3,783 միլիարդ դոլար:

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ Է ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԴԱՄԵՆԸ 5,5 ՏՈԿՈՍԸ

2018 թվականի առաջին եռամսյակի տվյալներով, Վրաստանում ապահովագրվել է 71000 ավտոմեքենա, ինչը կազմում է տրանսպորտային այդ միջոցի ընդհանուր քանակի 5,5 տոկոսը: Վերոնշյալ հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ մեքենաների ապահովագրության գործընթացը բավականին առաջադիմել է: Հիշեցնենք, որ 2017 թվականի առաջին եռամսյակի տվյալներով, ապահովագրվել էր 56 հազար, իսկ 2016 թվականի առաջին եռամսյակում՝ 52,6 հազար մեքենա:

Հաշվետու ժամանակահատվածում, ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրված մեքենաների ընդհանուր գումարը կազմում է 24,7 միլիոն լարի:

ԹԲԻԼԻՍՑԻՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՄԵՔԵՆԱ ՈՒՆԻ

Ասիական զարգացման բանկի (ADB) եւ ֆրանսիական SYSTRA ընկերության աջակցությամբ Թբիլիսիի քաղաքապետարանի իրականացրած հետազոտության համաձայն, քաղաքի Սաբուրթալոյի շրջանում ավտոմեքենա ունի բնակչության 72 տոկոսը, Վակեում՝ 70, Չուղուրեթիում՝ 60, Մթածմինդայում՝ 56, Գլդանիում՝ 49, Դիդուբեում եւ Սամգորիում՝ 45, Իսանիում՝ 42, Նածալադեւիում՝ 38 տոկոսը:

Թբիլիսիի կենտրոնական եւ էլիտար համարվող Վակե թաղամասում ընտանիքների 13 տոկոսը մեկից ավելի ավտոմեքենա ունի, իսկ արվարձանային Իսանիում՝ ընդամենը 5 տոկոսը:

Imedinews լրատվականը հիշեցնում է, որ մայրաքաղաքում վարորդական իրավունք ունի մոտ 357 հազար քաղաքացի, ինչը մայրաքաղաքի բնակչության մոտավորապես 32 տոկոսն է կազմում:

ՇՇՄՈՆԱՎԼՈՇՆԻ ԱՄՍԱԽՇՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 587 ԴԵՊՔ

Ընթացիկ տարվա հունիսի 11-17-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից երկրի մասշտաբով իրականացված վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 587 փաստ: Մասնավորապես, ստուգման է ենթարկվել 3473 հարկատու, արդյունքում՝ վավերացվել են հետեւյալ օրինախախտումները. առանց ապրանքագրի արտադրանքի փոխադրման 95 փաստ, տնտեսական գործունեությամբ նախատեսված հարկային օրենսգրքով սահմանված կարգի խախտման 47 դեպք, գանձարկղային սարքի չօգտագործման 450 փաստ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 21 ՀԱԶԱՐ ԼԱՐԻԻ ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԻ

Ընթացիկ տարվա հունիսի 16-ին, «Նինոծմինդա» եւ «Սարփի» սահմանային անցակետերում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի աշխատակիցները բացահայտել են ապօրինի կարգով երկրի տարածք ոսկե եւ արծաթե զարդերի ներկրման երեք փաստ: Մաքսային աշխատակիցների կողմից հայտնաբերված չհայտագրված զարդերի ընդհանուր գումարը կազմում է 21 հազար լարի: Հայաստանի քաղաքացի Ն.Կ.-ի մեքենայի խուզարկության ժամանակ, հայտնաբերվել է 3800 լարի արժողությամբ 64,74 գրամ ոսկե զարդեղեն:

Նույն օրը «Նինոծմինդա» մաքսային անցակետում Հայաստանի քաղաքացի Ա.Կ.-ի անձնական խուզարկության ժամանակ հայտնաբերվել է 7990 լարի արժողությամբ 135,77 գրամ ոսկե զարդեր: «Սարփիի» սահմանային անցակետում նույն օրը, Հայաստանի քաղաքացի Ի.Մ.-ի խուզարկության ժամանակ, հայտնաբերվել է 9350 լարի արժողությամբ 6,869 գրամ ոսկե եւ արծաթե զարդեղեն:

Իրավախախտները տուգանվել են:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ՄԵՁ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

չապետն ընդգծեց.

- Նոր կաբինետում անպայմանորեն կլինեն նոր դեմքեր: Մենք բանակցություններ ենք վարում շատ հետաքրքիր թեկնածուների հետ: Իրոք, գտնում եմ, որ Վրաստանի առավել արդյունավետ կառավարման համար 11 նախարարությունը բավարար է: Բնականաբար, դա իմ քաղաքական պատասխանատվությունն է, քանի որ ես եմ հանդես գալու խորհրդարանում սույն ծրագրով, եւ դա այդ ծրագրի անկապտելի մասն է:

Բախտաձեն նշեց, որ տվյալ պարագայում ամենագլխավորը երկրի էկոնոմիկայի համար կառավարչական աշխատակազմի վրա ծախսերի բեռի թեթեւացումն է:

- Այս տեսանկյունից մենք արդեն ունենք կարեւոր առաջընթաց, այս տարի ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 4,2-4,3 տոկոսը: Ապագայում այդ ցուցանիշը չպետք է գերազանցի 3,9 տոկոսը: Դրամական միջոցներով դա նշանակում է, որ ապագայում մենք կկարողանանք ունենալ բավականին կարեւոր գումար՝ 100-120 միլիոն լարի, որպեսզի ուղղենք այլ կարեւոր սոցիալական ծրագրերի,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Նորանշանակ վարչապետը չթաքցրեց, որ առաջիկա երկու-երեք շաբաթվա ընթացքում խորհրդարանին կներկայացվի կառավարության կառուցվածքային փոփոխությունն օրինականացնող նոր նախաձեռնությունը:

- Մոտավորապես, երկու-երեք շաբաթ անց, երբ կանցկացվեն եւ կավարտվեն խորհրդակցություններ օրենսդրական ու կադրային փոփոխությունների կատարման վերաբերյալ, մենք կրկին պետք է անցնենք այս կարգին՝ կոմիտեներում եւ խմբակցություններում ու խորհրդարանի լիագումար նիստում արդեն թարմացված նախարարների կաբինետով,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իր խոսքում վարչապետ Մամուկա Բախտաձեն անդրադարձավ իր գլխավորած կառավարության գլխավոր գերակայությունների հարցին՝ հայտարարելով, որ առաջնայինը Վրաստանի լիարժեք ինտեգրումն է եվրատլանտյան տարածքում:

- Այս տեսակետից «Վրացական երազանքն» ավելի շատ հաջողություններ ունի, եւ այդ հաջողությունները պետք է խորացնել ու ամրապնդել: Երկրորդ՝ ինովացիոն ու հիմնարար բարեփոխումներ կիրականացնենք անհրաժեշտ բոլոր ուղղություններով: Այդ բարեփոխումների արդյունքում, մենք կձեւավորենք նոր տնտեսական մոդել՝ խաղի նոր արդարացի կանոններով, որը կվերաբերի Վրաստանի յուրաքանչյուր ընտանիքի, մեր յուրաքանչյուր քաղաքացուն: Մենք կարող ենք ու կկրճատենք խզումը ժողովրդավարության բարձր ստանդարտի ու տնտեսական դրության միջեւ:

Բանականաբար, կշարունակենք ժողովրդավարական ինստիտուտների հետագա զարգացումն ու ուժեղացումը: Երրորդը փոքր կառավարության հայեցակարգն է. Վրաստանին հարկավոր են փոքր, բայց միեւնույն ժամանակ՝ ճկուն ու արդյունավետ կառավարական գերատեսչություններ: Դրա հետ մեկտեղ, նպատակահարմար եմ համարում ուժեղացնել այդ գերատեսչությունների ինստիտուցիոնալ ու հասարակական հսկողությունը, նաեւ հակակոռուպցիոն գծով: Չորրորդը, որը, պետք է անկեղծ ասեմ, իմ կյանքի գլխավոր գերակայությունը կրթությունն է, ինովացիան եւ երիտասարդությունը:

Հենց մոտիվացված, ձեռնարկչական էնտուզիազմով լի եւ, որ գլխավորն է, իր հնարավորություններին վստահ երիտասարդությունը կբերի այն արդյունքը, որը Վրաստանին տեղ կապահովի զարգացած տնտեսական երկրների շարքում: Հենց այդ Վրաստանն է միակ ու այլընտրանք չունեցող առաջարկը մեր աբխազ ու օս եղբայրներին, որպեսզի նրանք վերադառնան միասնական ընտանիք:

«ՏՆՏԵՍԱՊԵՍ ՀՁՈՐ ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԴԱՌՆԱ ԱԲԽԱԶ ԵՎ ՕՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

- Համոզված եմ, որ Վրաստանը կդառնա ժողովրդավարական, տնտեսապես հզոր եւ ժամանակակից երկիր, որը գրավիչ ու անայլընտրանքային կդառնա մեր աբխազ եւ օս եղբայրների համար,- Վրաստանի խորհրդարանում ներկայացնելով կառավարության գործունեության ծրագիրը՝ հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն եւ հավելեց.

- Վրաստանում իրականացվելիք բոլոր բարեփոխումները, որոնք կանցկացվեն էկոնոմիկայի, ենթակառույցային, կրթության, թե սոցիալական ոլորտներում, ծառայում են մի նպատակի՝ յուրաքանչյուր քաղաքացու, յուրաքանչյուր մարդու համար բարեկեցիկ, արժանավոր կենսապայմանների ստեղծմանը:

Հավատում եմ, որ մեր աբխազ ու օս եղբայրները կվերադառնան մեր ընդհանուր ընտանիք, եւ միասին կկառուցենք մեր ընդհանուր հզոր, եվրոպական երկիրը:

2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿԱՎԵԼԱՑՎԵՆ

Խորհրդարանի արտահերթ նիստում, հանդես գալով կառավարության գործունեության ծրագրով, վարչապետ Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ նախատեսվում է 2019-2020 թվականներին կենսաթոշակներն ավելացնել:

Ինչպես նշեց Մամուկա Բախտաձեն, Վրաստանի կառավարությունը կշարունակի նպատակային սոցիալական ծրագրերը խոցելի խմբերի նյութական իրավիճակը թեթեւացնելու համար:

- Կընդլայնվեն սահմանափակ ունակություններով անձանց, տարեցների եւ անապահով երեխաների ֆիզիկական ու սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները: Այդ թվում, 2019-2020 թվականներին նախատեսված է թոշակների ավելացում 20-ական լարիով, որի համար բյուջեում հաշվի է առնված մոտ 400 միլիոն լարի,- հայտարարեց վարչապետը:

ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանի պատգամավորներին ներկայացնելով կառավարության գործունեության ծրագիրը՝ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդես եկավ մասնավոր հատվածի մասնակցությամբ մաքսային եւ հարկային նոր օրենսգրքի ստեղծման նախաձեռնությամբ:

- Նախապատրաստվել են օրենսդրական փոփոխություններ, ըստ որի, ընդհանուր դատարանների համակարգում ձեւավորվելու են կոմերցիոն պալատներ: Դրանք մասնագիտանալու են կոմերցիոն եւ հարկային գործերի քննարկման ուղղությամբ: Հետեւաբար, իրականացված բարեփոխումների արդյունքում, զգալիորեն կբարձրանա կոմերցիոն եւ հարկային վեճի հարցերով դատավարության որակն ու արագությունը: Նույնը կարելի է ասել անվճարունակության համակարգի բարեփոխման մասին: Դա լուրջ գործոն է շուկայական էկոնոմիկայի զարգացման ուղղությամբ: Առանց վճարունակության արդյունավետ համակարգի առկայության, բնականաբար, շուկայական էկոնոմիկայի զարգացումը չի կարող իրականացվել հաջողությամբ: Տնտեսական բնույթի կարեւորագույն բարեփոխումներից է նաեւ մեր հարկային ու մաքսային օրենսգիրքը, որը ներկա դրությամբ չի կարող պատասխանել մեր հասարակության մարտահրավերներին ու սպասումներին: Այն հնացել է: Հետեւաբար, հանդես եմ գալիս նախաձեռնությամբ՝ բաց հարթակի վրա մասնավոր հատվածի մասնակցությամբ ստեղծել մաքսային եւ հարկային օրենսգրքեր,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Նոր վարչապետի հաջորդ նախաձեռնությունը վերաբերում էր մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը հարկատուների առկա պարտքերի մարմանը: Նրա խոսքով, սույն նախաձեռնությունը տարածվում է ավելի քան 36 հազար հարկատուների վրա:

- Ցանկանում եմ հայտարարել մի կարեւոր նախաձեռնության մասին: Երբ մենք խոսում ենք էկոնոմիկայում անարդարացիության մասին, դրա ամենաակնառու օրինակը 2011-2012 թվականներին էր, երբ մեր ձեռներեցներին ու ընկերություններին տրվեցին հարկային սխալ պարտավորություններ: Ելնելով դրանից եւ հաշվի առնելով այն կարեւոր գաղափարը, որ մենք ցանկանում ենք մեր էկոնոմիկայում լիարժեք ներգրավել յուրաքանչյուր ակտիվ՝ մեր առաջին նախաձեռնությունն առնչվում է մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը առկա բոլոր հարկային պարտքերի մարմանը: Նշեմ, որ այդ հարկատուների ետեւում կանգնած են ընտանիքներ, ինչպես նաեւ երկրի տնտեսական կյանքում լիարժեք մասնակցության հնարավորություններ,- ընդգծեց վարչապետի թեկնածուն:

Սաքահիտցելոս ոստիկանության նախարարություն

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԳՈՐԾԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու հրամանագրով, Վրաստանի ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի երրորդ բաժնի համաձայն, 2018 թվականի հոկտեմբերին անցկացվելիք նախագահական ընտրությունների միջգերատեսչական հանձնաժողովը կգործի ընթացիկ տարվա հուլիսի 1-ից: Ազատ ու արդարացի ընտրությունների անցկացման համար, հանձնաժողովի նպատակն է նախընտրական քարոզարշավի ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործման կանխումը, ընտրությունների ժամանակ հանրային աշխատակիցների կողմից ընտրական օրենսդրության խախտումների նախականխումը եւ բացահայտված խախտումների հարցով արձագանքումը: Հանձնաժողովի նախագահը արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին է: Հանձնաժողովն ապահովում է գերատեսչությունների միջեւ գործունեության համակարգումը եւ նպաստում Վրաստանի կառավարության ու ընտրություններում ներգրավված բոլոր շահագրգիռ անձանց միջեւ երկխոսության իրականացմանը: Միջգերատեսչական հանձնաժողովը համագործակցում է ընտրական գործընթացում ներգրավված քաղաքական կուսակցությունների ու դաշինքների, տեղական եւ միջազգային կազմկերպությունների դիտորդների հետ:

Հանձնաժողովը մինչեւ ընտրական սուբյեկտների գրանցման ժամկետի սպառումը նիստը գումարելու է երկու շաբաթվա ընթացքում՝ առնվազն մեկ անգամ, իսկ ժամկետի սպառումից հետո՝ շաբաթական մեկ անգամ: Հանձնաժողովը քննարկում է լրատվամիջոցներում տարածված տեղեկատվությունը, որն առնչվում է հանրային աշխատակիցների կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության հնարավոր խախտման փաստերին, նաեւ քաղաքական կուսակցությունների, դաշինքների, առանձին կազմակերպությունների կողմից վավերացված օրենսդրության հնարավոր խախտումների հարցը: Ազատ եւ արդարացի ընտրական միջավայրի ստեղծման աջակցության նպատակով, հանձնաժողովը առաջարկություններ եւ հանձնարարականներ է ներկայացնում Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վարչական կազմակերպություններին բացահայտված խախտումների կանխման ու վերացման նպատակով:

Նշենք, որ ազատ եւ արդարացի ընտրությունների համար ձեւակերպված միջգերատեսչական հանձնաժողովն ակտիվորեն աշխատել է 2013 թ.-ի նախագահական, 2014 թ.-ի տեղական ինքնակառավարման, 2015 թ.-ի միջանկյալ, 2016 թ.-ի խորհրդարանական, 2017 թ.-ի տեղական ինքնակառավարման եւ 2018 թ.-ի միջանկյալ ընտրությունների ժամանակ: Արդարադատության նախարարի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը վերոնշյալ ժամանակահատվածում բարձր գնահատականի է արժանացել միջազգային կազմակերպությունների հաշվետվություններում: